

Յեթի մշակմանը, որոնք անհրաժեշտ են Ռուսաստանին՝ տնտեսական անկախութիւն ձեռք բերելու համար: Եւ, վերջապէս, մշակութային մարդում ստալինեան գիծը պահանջում էր որպէսզի հայ մշակոյթը դարձանայ ոչ թէ ազգային այլ միջազգային կամ պրոլետարական, ուղիներով, այսինքն ոչ թէ համազգային արժէքներ կերտի, այլ ծառայի կոմկուսի ընթացիկ քաղաքականութեան յաջող կիրառման, մասնաւորապէս շինարարական ասպարէզում (սոցիալիզմի կառույցում):

Ա. Խանջեանը, իր քարտուղարութեան ամբողջ ընթացքում, հետեւեց անշեղօրէն յիշեալ ուղեգծին: Նրա ներառութիւնն ու եռանդը դնահատեց իր մեծեր կողմից եւ այդ գնահատանքի մէկ արտայայտութիւնը եղաւ լեհիմեան շքանշանը, որ նա ստացաւ անցեալ տարի Դեկտեմբերի 20-ին Մոսկւայում: Իր ձեռք բերած դերքն ու համբաւը նա պահեց մինչեւ վերջին ժամանակները, երբ Համամիութենական կոմկուսի Կենտր. Կոմիտէի լիազումար նիստի (1-4 յունիս) կողմից ընդունւած նոր Սահմանադրութեան նախագծի եւ մասնաւորապէս Ազգրկովկասեան Դաշնակցութեան վերացման հարցի շուրջը խոր տարակարծութիւններ ունեցաւ կուսակցութեան ղեկավար շրջանների հետ եւ դրա հետեւանքով դրեց այնպիսի մի վիճակի մէջ, որ ստիպւած եղաւ վերջ տալ իր կեանքին: Մեզ պակտում են Խանջեանի կատարած այդ անօրինակ քայլի մանրամասնութիւնները: Այսքանը գիտենք միայն, որ Մոսկւան ու Թիֆլիզը նրա այդ քայլը համարեցին «դաւաճանական մի հարւած՝ Կոմկուսի թիկունքին ուղղւած»: Դրա համար նրանք ունեն, անշուշտ, բաւականաչափ պատճառներ . . .

Ա. Խ.

## II

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԵՆԵԱՆ

Յուլիս 1-ին Երեւանում վախճանւել է հայ բեմի մեծատաղանդ դերասան Յովհաննէս Արեւեանը:

Ծնւել է 1865 թ.ին Շամախի քաղաքում: 1873-ի երկրաշարժից յետոյ Արեւեանը ընտանիքի հետ տեղափոխւում է Բագու եւ մտնում է ոչալական դպրոց (ռուսական երկրորդական վարժարան), որի դասընթացը սակայն չի աւարտում: 1881 թ. մասնակցում է Թիֆլիզից Բագու եկած հայ դերասանական խմբի ներկայացումներին: Հետեւեալ տարին 17-ամեայ պատանի Արեւեանը մտնում է Գոնչարովի ռուսական խումբը, որպէս բեմայարդար, դերասան եւ տնտեսական գործերի վարիչի օգնական: 1886 թ. տեղափոխւում է Թիֆ-

լիզ, կովկասահայերի մտաւոր կենտրոնը, բայց այնտեղ մշտական թատերախումբ չգտնելով, մտնում է դարձեալ մի ուսանական խումբ, որը խաղում էր ե՛ւ դրամա, ե՛ւ օպերա: Նոյն թւին Ռուսաստանի քաղաքներում կատարած իր արտիստական պտոյտներից Թիֆլիզ է վերադառնում հռչակաւոր Պ. Աղամեանը եւ կազմում է հայկական մի թատերախումբ, սթիւն անդամակցում են Տէր-Դաւթեանը, Գ. եւ Ս. Չմշկեան ամուսինները եւ Թիֆլիզում եղած մի քանի այլ դերասանները հետ միասին նաեւ Յ. Աբելեանը: 1887-ին այս խումբը, մի շարք ներկայացումներ տալուց յետոյ, քայքայւում է. Պ. Աղամեան նորից մեկնում է Ռուսաստան, իսկ Յ. Աբելեանը՝ Բագու, որտեղ մասնակցում է ուսանական խմբի ներկայացումներին: 1888-ին Աբելեանը կազմում է իր թատերախումբը Բագուում՝ հայերէն ներկայացումներ տալու համար, սակայն նիւթական դժւարութիւնների է հանդիպում եւ հազիւ մէկ թատերաշրջան բոլորած՝ ցրում է իր խումբը եւ գնում է Մոսկւա (1889)՝ ծանօթանալու ուսանական թատրոնին եւ ժամանակակից թատերգութեան:

1891-ին Թիֆլիզում, դերասան Գէորգ Պետրոսեանի ղեկավարութեամբ կազմակերպւում է մի հայ թատերախումբ, որի մէջ են մտնում, բացի Պետրոսեանից, Սիրանոյշը, Տէր-Դաւթեանը, Թուրեանը, Աբելեանը, Արմենեանը, Արշ. Յարութիւնեանը եւ ուրիշները: Այստեղից սկսւում է Աբելեանի գործունէութեան համար մի նոր շրջան, երբ նա ամբողջովին նւիրւում է հայ բեմին եւ սկսում է խաղալ միայն հայ թատրոնում: Պ. Աղամեանի մահից յետոյ, Յ. Աբելեանը դառնում է թատերական խմբերի ղեկավար ղէմքը՝ թէ՛ իրեւ կազմակերպիչ եւ թէ՛ իրենւ ռեժիսոր-դերասան:

1899-ին նա գնում է Եւրոպա, ծանօթանալու այնտեղի թատրոնական աշխարհին: Նա լինում է Փարիզում, Լոնդոնում, Բերլինում, Վիեննայում եւ հետեւում է այնտեղի բեմադրութիւններին ու անւանի դերասաններին խաղին:

1902 թ. Թիֆլիզում հիմնւում է Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը, որ իր շուրջն է հաւաքում դերասանական լաւագոյն ուժերին, մշակում է խաղացանկ իւրաքանչիւր եղանակի համար եւ ստանձնում է, առհասարակ, սիստեմատիկ ներկայացումներ կազմակերպելու պատասխանատու գործը: Աբելեանը դառնում է Դրամատիկական Ընկերութեան խմբում առաջաւոր դերասանը եւ հինգ թատերաշրջան գործում է այնտեղ, մէջ ընդ մէջ տանելով եւ ռեժիսորի դժւարին պարտականութիւնը:



վաստակավոր դերասան Յ. ԱՐՆԷՆ

1907-ին Թիֆլիզի եւ Բագուի մէջ հանդիսաւոր կերպով տօնուում է Յ. Արեւիկաի դերասանական գործունէութեան 25-ամեակը: Թեւեակոխելով իր բեմական գործունէութեան հասուն տարիների շրջանը, Արեւիկանը անխոնջ եռանդով շարունակում է ծառայել հայ բեմին, ներկայացումներ կազմակերպելով Թիֆլիզից եւ Բագուից զատ՝ նաեւ կովկասահայ դաւառական կենտրոններում, Ռուսաստանի գրեթէ բոլոր հայաբնակ վայրերում, իշպէս նաեւ Պարսկաստանում, Թուրքիայում, Եգիպտոսում եւ հայ այլ գաղութներում:

1919 թւին Արեւիկանը Թիֆլիզից մեկնում է արտասահման եւ մընում է մինչեւ 1925 թ., այցելելով Պոլիս, Իզմիր, Եգիպտոս, Փարիզ, Բրիւսէլ, Լոնդոն, Բեռլին, Նիւ Եորկ, Բոստոն, Չիկագո, Դիտրոիտ եւ այլ տեղեր: 1925-ին վերադառնում է Անդրկովկաս, այցելում է Հայաստան, բայց չի հաստատւում այնտեղ: Ստանալով ժողովրդական դերասանի կոչում ՀայԺողովրդահից, Արեւիկանը չի մտնում Երեւանի պետական թատրոնի խմբի մէջ եւ գերադասում է խաղալ Բագուում եւ Թիֆլիզում, երբեմն միայն այցելելով Հայաստան՝ գաւառային համար: Ճիշդ այդպիսի մի կարճատեւ այցելութեան նպատակով նա յունիսի վերջերին Թիֆլիզից մեկնում է Երեւան, որտեղ հիւանդանում է թոքերի բորբոքումով եւ մեռնում է յուլիսի 1-ին:

Յ. Արեւիկանը ծառայել է բեմին 55 տարի եւ այդ ընթացքում նա խաղացել է 1000-ից աւելի դեր: Նրա գլխաւոր դերերն են՝ Օթէլլօ, Լիր-Արքայ, Կարլ-Մորր, Շարոկման, Նեզնամով («Անմեղ մեղաւորներ» - Օստրովսկի), Կորբատօ («Ոճրագործի ընտանիքը» - Ճիակոմէտտի), Բասսալիւհ («Կրեչինսկու հարսանքը» - Սուխովու Կարլին), Օթար Բէկ («Դաւաճանութիւն» - Սումբատով - Իւսիւն), Սվեռնգալի («Տրիլի» - Գէ), Ուրիէլ Ակոստա, Տարտիւֆ եւ այլն:

Հայ ինքնուրոյն թատերգութեան ջերմ պաշտպան լինելով, նա հայկական խաղացանկին յատկացրել է առաջին տեղը եւ անգերազանցելի պատկերողն է եղել մասնաւորապէս Շիրվանզադէի հերոսների (Էլիզարարով, Բարխուդար, Գիթ Դանիէլ, Սենեքերիմ): Պէտք է մատնանշել որ Արեւիկանի դերասանական եւ Շիրվանզադէի գրական ստեղծագործութիւնները մեծապէս կապւած են եղել միմեանց հետ: Շիրվանզադէն, Գ. Սունդուկեանից յետոյ, առաջինն եղաւ, որ ուսիւղ կերպով զարգացրեց ոչալիստական ուղղութիւնը հայ գրականութեան մէջ եւ Արեւիկանը, իր հերթին, եղաւ հիմնադիրը դերասանական խաղի ոչալիստական ուղղութեան, մի ուղղութիւն, որ եկաւ

փոխարինելու հայ բեմում մինչև 90-ական թվականները վերջը իշխող կեղծ դասական, ռոմանտիկական եւ կենցաղային դպրոցներին: Յ. Արեւեանի մահով հայ բեմը կորցնում է մի մեծատաղանդ դերասան, որի նմանը այսօր Հունի հայ թատրոնը:

Ա. Խ.

## III

## ԲԱԲԳԷՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ (ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ)

Կիլիկիոյ տարագիր կաթողիկոսարանի՝ Անթիլիասի մէջ յուլիսի 9-ին վախճանած է «Կաթողիկոս» կաթողիկոս Բարդէն Ա.

Իր մասին, իբր կաթողիկոս՝ շատ բան չունինք ըսելիք, որովհետեւ եթէ ունեցաւ օգտակար գործունէութիւն մը, այն ալ Անթիլիասի չորս պատերէն ներս եղաւ միայն: Անկէ դուրս ան՝ ոչ միայն օգտակար չեղաւ այլ տխուր յիշատակներ միայն թողուց դժբախտաբար:

Սակայն, մինչ այդ, Բարդէն վարդապետը, ապա նաեւ եպիսկոպոսը, իր համեստ դիրքերուն մէջ, բազմաբղիւն գործունէութիւն մը ունեցաւ, իբր կորովի եւ ժողովրդանէր առաջնորդ եւ մանաւանդ իբր գրչի մարդ ու բանասէր:

Ծնած էր Այնթապ 1868-ին: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ իր ծննդավայրին մէջ, ուրկէ կանցնի Երուսաղէմ, «Ժառանգաւորաց» դպրոցը, կուսակրօն դառնալու նպատակով: Դժգոհ՝ Երուսաղէմի վտիտ ուսումէն, կերթայ Արմաշ եւ քանի մը տարի հոն ուսանելէ յետոյ, 1895-ին կը լրացնէ Դպրեմանքի դասընթացքը, Զաւէն, Սմբատ, Մաշթոց, Թորգոմ եւն. ընկերներու հետ միասին: 1897-ին ձանիկ կը զրկուի իբր առաջն. տեղապահ: 1889-ին Մուշ կը մեկնի իբրեւ ընդհ. վանահայր վանքերու եւ առաջն. տեղապահ: Ամենէն լուսաւոր եւ գեղեցիկ շրջանն էր այդ՝ Բարդէն վարդապետի գործունէութեան: Խիղախ՝ հայ ժողովուրդի շահերու պաշտպանութեան գործին մէջ եւ միաժամանակ պրպտող ու բանիմաց բանասէր մը եղաւ ան, որ ուսումնասիրեց Տարօն աշխարհի պատմական կոթողները, վայրերը եւ ձեռագիր յիշատակարանները, որոնք արդիւնքն են իր բանասիրական բազմաթիւ աշխատանքները, որոնք լոյս տեսած են ժամանակի զանազան պարբերաթերթերու եւ իր խմբագրած (1905-6) Լոյս, Տարոս, Սիոն շաբաթաթերթներու ինչպէս նաեւ «Հանդէս Ամսօրեայ»ի, եւ «Բանասէր»ի մէջ: